

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
ԱՄԲԻՈՆԻ 2015-2016 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ամբիոնն ունի 14 աշխատակից, այդ թվում՝

- 1 բժշկ. գիտ. թեկն., դոցենտ,
- 1 մանկ.գիտ. թեկն., դոցենտ,
- 2 հոգեբ. գիտ. թեկն., դոցենտ,
- 2 հոգեբ. գիտ. թեկն., ասիստենտ,
- 1 մանկ. գիտ. թեկն., ասիստենտ,
- 1 ասիստենտ,
- 5 դասախոս,
- 1 գործավար:

«Մանկավարժություն և հոգեբանություն» ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներին:

Հաշվետու 2015-2016 ուստարվա ժամանակահատվածում ամբիոնում ներկայացվել են առարկայական փաթեթներ /պորտֆոլիոներ/, որոնց մեջ տեղայնացվել են ժամանակակից գիտական տեսությունները և հայեցակարգերը:

2015-2016 ուստարվա ընթացքում, ըստ նախապես սահմանված գրաֆիկի, յուրաքանչյուր ամիս դասախոսները հանդես են եկել գիտական զեկույցներով, որից հետո կատարվել են քննարկումներ, դասախոսների միջև տեղի է ունեցել փորձի փոխանակում:

Հաշվետու ուստարվա ընթացքում ամբիոնը մշակել, կազմել և ՈՒՄՎ հաստատման է ներկայացրել «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության կրթական ծրագիրը և կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը: Գործընթացին ներգրավված են եղել դասախոսներ և համապատասխան մասնագետներ: Կրթական ծրագրի մշակման և կազմման համար կատարվել է առաջավոր փորձի ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն՝ ՀՀ, արտասահմանյան, Ռուսաստանի Դաշնության տարբեր բուհերի կրթական ծրագրերի օրինակներից:

Ընթացիկ ուստարում հետազոտական նախագծերում ընդգրկված է եղել 1(մեկ) դասախոս, ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակվել են 23 (քսաներեք) գիտական հրատարակություններ, որից 8(ութ)–ը կատարվել է արտաքին գործընկերների հետ համատեղ:

2015-2016 ուստարվա ընթացքում ամբիոնում կատարվել են հետևյալ ուսումնագիտական աշխատանքները.

- ներկայացվել են առարկայական փաթեթներ /պորտֆոլիոներ/
- վերանայվել, թարմացվել և հաստատվել են ընթացիկ քննությունների, ընթացիկ ստուգումների, հանրագումարային քննությունների հարցաշարերը
- ներկայացվել է դասախոսի անհատական զարգացման պլանը
- քննարկվել և հաստատվել են կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները
- ներկայացվել և հաստատվել են ամփոփիչ պետական քննության հարցաշարերը
- հաշվառվել են դասախոսների առարկայական մուտքերը՝ ընթացիկ քննություններից առաջ
- կատարվել են դասալսումներ ամբիոնի վարիչի կողմից, ինչպես նաև փոխադարձ դասալսումներ դասախոսների կողմից
- ուսումնական և աշխատանքային պլանների քննարկում, վերանայում
- անհատական ծանրաբեռնվածությունների կազմում, հաստատում
- տեղի են ունեցել ավարտական աշխատանքների պաշտպանություններ և ամփոփիչ ատեստավորման քննություններ:

Ամբիոնի գործունեությունը ճիշտ կազմակերպելու համար կազմվել են հետևյալ աշխատանքային գրաֆիկները և ժամանակացույցերը.

- փոխադարձ դասալսումների գրաֆիկ
- դասալսումների գրաֆիկ
- ուսումնական խորհրդատուի հետ ուսանողների հանդիպման ժամանակացույց
- կուրսային և ավարտական աշխատանքների խորհրդատվության ժամանակացույց, հանդիպման գրաֆիկ
- դասախոսական կազմի զբաղվածության գրաֆիկ՝ փոխարինողների ցուցակով
- դասախոսական կազմի զբաղվածությաքն գրաֆիկ՝ այլ բաժիններում
- լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց
- ամբիոնի կադրային ներուժ /հաստիքներ, պաշտոններ, այլ տվյալներ/
- կուրսային և ավարտական աշխատանքների գրաֆիկ /ղեկավար-ուսանող-թեմա/

2015-2016 ուստարվա ընթացքում ամբիոնը կազմակերպել է մի շարք միջոցառումներ, կատարվել են ուսումնաճանաչողական այցեր, դասախոսները հանդես են եկել գիտական զեկույցներով.

1. 2015թ. հոկտեմբերի 10-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի ունեցավ Հոգեկան առողջության համաշխարհային օրվան նվիրված միջոցառում, որը նախաձեռնել ու կազմակերպել էին մասնաճյուղի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. թեկն., դոցենտ Վաչիկ Բրուտյանը և ամբիոնի դասախոս Վիկտորյա Մելիքսեթյանը:

Ներկա էին մասնաճյուղի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, հյուրեր:

Բացման խոսքով հանդես եկավ պարոն Բրուսյանը՝ կարևորելով նման միջոցառման կազմակերպումը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, նշելով, որ արդեն ավանդույթ է դարձել Հոգեբանի միջազգային օրը, Սոցիալական մանկավարժի օրը մասնաճյուղում նշելը. այդ իմաստով բացառություն չէ և Հոգեկան առողջության համաշխարհային օրը:

Այնուհետև մասնակիցները համապատասխան թեմաներով ներկայացրին զեկուցումներ:

2. Ըստ նախօրոք սահմանված գիտական զեկույցների գրաֆիկի 2015թ. նոյեմբերի 14-ին ԵՊՀ ԻՄ-ի օնլայն լսարանում «Սոցիալական դեպրիվացիա» թեմայով գիտական զեկուցում կարդաց Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ասիստենտ, հոգ. գիտ. թեկնածու Դիանա Սարգսյանը:

Ներկա էին Հոգեբանության և մանկավարժության ամբիոնի վարիչ Վ.Բրուսյանը, ամբիոնի դասախոսները, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի տարբեր մասնագիտությունների ու կուրսերի ուսանողներ:

3. 2015թ. նոյեմբերի 19-ին ԵՊՀ ԻՄ-ի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 2-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները կատարեցին ուսումնաճանաչողական այց ԵՊՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի փորձարարական հոգեբանության, անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիաներ:

Ուսումնաճանաչողական այցը կազմակերպվել էր ԵՊՀ ԻՄ-ի տնօրենության աջակցությամբ ու Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ:

4. 2015թ. նոյեմբերի 21-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տեղի ունեցավ Հոգեբանի օրվան նվիրված միջոցառում, որը կազմակերպվել էր Ուսանողական գիտական ընկերության ու «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողների համատեղ ջանքերով:

«Չանասիրաբար քայլիր առաջ՝ հաղթահարելով բոլոր դժվարությունները» կարգախոսը կրող միջոցառմանն ակտիվորեն մասնակցեցին ոչ միայն ուսանողները, այլև Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դասախոսները, դեկանատի աշխատակիցները:

Մասնակիցներն ուսանողներին բաժանեցին թռուցիկ խոսքեր և հոգեբանության խորհրդանիշ «ψ» (փսի) տառը քաղցրավենիքի տեսքով հյուրասիրեցին բոլորին:

Հոգեբանի օրվա կապակցությամբ կազմակերպվել էր նաև ֆլեշմոբ «Նկարիր ψ», որին ակտիվ մասնակցություն ունեցան Կիրառական արվեստի ֆակուլտետի ՈՒԳԸ-ի անդամները և ուսանողները:

5. 2015թ. դեկտեմբերի 4-ին ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան (դեկտեմբերի 3-ը 1992թ. ՄԱԿ-ի կողմից հռչակվել է որպես Հաշմանդամների միջազգային օր):

Միջոցառման ընթացքում առկա ուսուցման համակարգի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Արուսյակ Գասպարյանը ներկայացրեց «Հաշմանդամության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները» թեմայով զեկուցում՝ անդրադառնալով «Հաշմանդամություն»

հասկացությանը, նրա տեսակներին ու խնդիրներին, 2010թ. ՀՀ-ում ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի (2006թ.) վավերացմանը, ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության՝ ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածով ամրագրված իրավունքին և այլն:

Ելույթ ունեցան հեռակա ուսուցման համակարգի «Մ/Հ» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհիներ Սյուզաննա և Ռուզաննա Աղաբաբյանները, նույն կուրսի ուսանողուհի Մարիամ Եսայանը՝ իրենց անունից ներկայացնելով հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները, լիարժեք կերպով հասարակություն ինտեգրվելու պահանջը, բացահայտելով իրենց մարդկային ազնիվ ձգտումներն ու գեղեցիկ երազանքները:

Ապա ցուցադրվեց ներառական կրթությանը վերաբերող տեսանյութ:

6. Ամբիոնի վարիչի գլխավորությամբ Մ/Հ բաժնի ուսանողները գործնական, ուսումնաճանաչողական այցեր են կատարել հետևյալ հաստատություններ՝

- «Հույսի կամուրջ» ՀԿ երեխայի զարգացման ցերեկային կենտրոն,
- «ՄՈՍ մանկական գյուղեր» Իջևանի մասնաճյուղ,
- Իջևանի ավագ դպրոց,
- ԵՂՀ-ի Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի փորձարարական հոգեբանության, անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիաներ:

Այցելության նպատակն է եղել ուսանողներին մոտիկից ծանոթացնել հատուկ մանկավարժի, հոգեբանի, լոգոպեդի պրակտիկ գործունեությանը և երեխայի զարգացմանն ուղղված տարվող աշխատանքներին:

Վ.Բրուտյանը կարևորում է նման այցելությունները և առաջարկում, որ պետք է հաճախակի կազմակերպել նման գործնական այցեր և կատարել փորձի փոխանակում:

7. 2016թ. մարտի 11-ին ԵՂՀ Իջևանի մասնաճյուղում ներկայացվեց Կանանց տոնին նվիրված ուսանողական զեկուցումների շարք, որը նախաձեռնել և կազմակերպել էր Մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

Բացման խոսքով հանդես եկավ Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Վ.Բրուտյանը՝ շնորհավորելով կանանց, մայրերի և աղջիկների տոնը, նրանց հղելով գեղեցիկ բարեմաղթանքներ, երջանկություն, պտղաբերություն, ամենայն բարիք:

8. 2016թ. ապրիլի 19-ին Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում կայացավ ամենամյա ուսանողական հանրապետական գիտաժողով, որտեղ ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին Մ/Հ բաժնի ուսանողները:

Ուսումնական տարվա վերջում ամբիոնի վարիչի կողմից ամփոփվել են դասախոսի գնահատման վարկանիշային թերթիկների միավորները:

Դասախոսներին հանձնարարված է 2016թ. ամռան ամիսներին մշակել 2016-2017 ուստարվա ընթացքում դասավանդվող առարկաների առարկայական փաթեթները /պորտֆոլիոներ/: